Ի՞նչ է կատարվելու ողջերի և մահացածների հետ Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստի ժամանակ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Կարդացեք Ա Թեսաղոնիկեցիս 4.13-18 հատվածները՝ փնտրելով գաղափարներ այն մասին, թե ինչ կկատարվի արդարների հետ, երբ Հիսուսը վերադառնա: Նկատի ունեցեք, որ Երկրորդ Գալուստի ժամանակ մահացածների և ողջերի հետ տարբեր բաներ են կատարվելու: Այս հատվածներում նշվող «ննջեցյալներ» բառը վերաբերում է մահացածներին: Օգտակար կլինի կարդալ Ա Թեսաղոնիկեցիս 4.15, 17 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը (հատված 15, ծանոթագրություն *ա* և հատված 17, ծանոթագրություն *ա*):

- Ի՞նչն ամենից շատ տպավորեց ձեզ այս հատվածներում:

Այնուհետև կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 88.96-98 հատվածները՝ փնտրելով լրացուցիչ գաղափարներ այս իրադարձություններ մասին: (Կարող եք նաև կարդալ 99-101 հատվածները՝ իմանալու համար, թե ինչ է կատարվելու այն մարդկանց հետ, որոնք չեն ընդունել Հիսուս Քրիստոսին այս կյանքում):

- Ի՞նչ նոր գաղափարներ ձեռք բերեցիք:

Բացահայտված ճշմարտություններից մեկը կարող է լինել՝ **Հավատարիմ Սրբերը, որոնք մահացել են Երկրորդ Գալուստից առաջ, հարություն կառնեն, երբ Քրիստոսը կրկին գա**:

«Հափշտակվել» բառը Ա Թեսաղոնիկեցիս 4.17 հատվածում վերաբերում է այն արդարներին, որոնք կմիավորվեն՝ Փրկչին Իր Երկրորդ Գալուստի ժամանակ հանդիպելու համար: Քրիստոնյաներից շատերը օգտագործում են *հափշտակում* բառը, երբ խոսում են այդ ժամանակի մասին:

Տասներկու Առաքյալների Քվորումից երեց Նիլ Լ. Անդերսենը կիսվել է այս սրբազան իրադարձության մասին մտքով.

Ոչինչ այնքան չի մեծացնում Քրիստոսի մասին խոսելու իմ ցանկությունը, որքան Նրա վերադարձը պատկերացնելը: Չնայած մենք չգիտենք, թե Նա երբ է գալու, Նրա վերադարձի իրադարձությունները ցնցող կլինեն: Նա կգա երկնքի ամպերի մեջ՝ վեհությամբ ու փառքով, Իր բոլոր սուրբ հրեշտակներով: Ոչ թե մի քանի հրեշտակ, այլ Նրա բոլոր սուրբ հրեշտակները: Մենք չենք խոսում Ռաֆայելի նկարած վարդագույն այտերով քերովբեների մասին, որոնք կան «Վալենտինի» օրվա քարտերի վրա: Սրանք դարերի հրեշտակներն են. հրեշտակներ, որոնք ուղարկվել են՝ առյուծների բերանը փակելու և բանտի դռները բացելու համար, ազդարարելու Նրա երկար սպասված ծնունդը, և Գեթսեմանիում Նրան սփոփելու համար, հավաստիացնելու աշակերտներին Նրա Համբարձման ժամանակ, և բացելու ավետարանի փառահեղ վերականգնումը:

Կարո՞ղ եք պատկերացնել, որ մենք «կհափշտակվեն[ք] վեր, որ դիմավորեն[ք]» Նրան՝ վարագույրի այս կամ այն կողմում: Դա Նրա խոստումն է արդարներին: Այդ փորձառությունը հավերժ ազդեցություն կթողնի մեր հոգիների վրա (Նիլ Լ. Անդերսեն, «Ձեր հավատքի փորձությունը», *Ensign* կամ *Լիահոնա,* նոյեմբեր 2020, 91):

Մի պահ պատկերացրեք, թե ինչ է նշանակում Փրկչի Գալուստի ժամանակ ընդգրկվել արդարների կազմում:

- Ի՞նչ մտքեր կամ զգացմունքներ կունենայիք այդ օրը: Ի՞նչ եք զգում, երբ պատկերացնում եք, որ Փրկիչը կարող է ցանկանալ, որ դուք Իրեն միանաք Իր Գալուստի ժամանակ: Այդպիսի ապագայի պատկերացումն ինչպե՞ս է ազդում ձեր ներկայի վրա:

Ա Թեսաղոնիկեցիս 4.18 հատվածում Պողոսը հորդորում է Սրբերին «իրար մխիթարել այս խոսքերովը»:

- Ինչպե՞ս են ձեզ մխիթարում Պողոսի խոսքերը: Դրանք ինչպե՞ս կարող են ձեզ մխիթարել ապագայում:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *What Will Happen to the Living and the Dead at the Second Coming of Jesus Christ?*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.